ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
«Յունիբանկ» ՓԲԸ
Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի
20.05.2003թ. N 5
Երևան

Մասնակցում էին
Ընկերության թվով 100 % ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերերի լիազոր ներկայացուցիչները.

Բանկի բաժնետերեր՝
1.Ժողովի նախագահ – «Յունիինվեստ» ՍՊԸ-ի լիազորված անձ Գ. Տ. Զաքարյանը – 39%
2. Ժողովի քարտուղար- «Աննահինվեստ» ՍՊԸ-ի լիազորված անձ Գ.Աբրահամյանը – 51%
3. «DEBBAN INVESTMENTS LIMITED» ընկերության լիազորված անձ Գ.Սրապյանը- 10%

Հրավիրվածներ՝
1. Գործադիր տնօրեն – Վ.Աքայանը
2. Գլխավոր հաշվապահ - Գ.Գրիգորյանը
3. Վերստուգող հանձնաժողովի նախագահ՝ Ռոբերտ Գալստյանը, անդամներ՝ Վիգեն Մկրտչյանը և Միքայել Պողոսյանը
4. Խորհրդի անդամ – Ֆ.Սարգսյանը
5. Իրավաբանական բաժնի պետ – Օ.Առաքելյանը
6. ՀՀ կենտրոնական բանկի ներկայացուցիչներ - Ա.Բաղալյանը և Ա.Հովհաննիսյանը

ՕՐԱԿԱՐԳ.
1. Տարեկան ֆինանսական և հարկային հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների հաստատման մասին.
2. Շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունման և տարեկան շահութաբաժինների չափի հաստատման մասին.
3. Բանկի աուդիտն անցկացնող անձի հաստատման մասին.
4. Բանկի մասնաճյուղերի աշխատանքների տարեկան արդյունքների հաստատման մասին.

ԼՍԵՑԻՆ.
Գոհար Գրիգորյանին– 1-ին հարցի վերաբերյալ, առաջարկեց, որ ըստ Վերստուգող հանձնաժողովի կողմից ներկայացված ինչպես նաև Խորհրդի նախնական հաստատմանը արժանացած Բանկի գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ կազմված եզրակացության, Բանկի
1. Ակտիվները կազմել են 7155830 հազ.դրամ
2. Պարտավորությունները՝ 4218269 հազ.դրամ
3. Կապիտալը՝ 2937560 հազ.դրամ
4. Տոկոսային եկամուտները կազմել են ընդամենը՝ 445456 հազ.դրամ
5. Տոկոսային ծախսերը կազմել են ընդամենը՝ 228533 հազ.դրամ
6. Զուտ տոկոսային եկամուտները կազմել են 216923 հազ.դրամ
7. Ոչ տոկոսային եկամուտները կազմել են ըդամենը 262610 հազ.դրամ
8. Ոչ տոկոսային ծախսերը կազմել են ընդամենը 276100 հազ.դրամ
9. Զուտ ոչ տոկոսային ծախսերը կազմել են 13490 հազ.դրամ
10. Զուտ մասհանումները ընդամենը 60919 հազ.դրամ
11. Շահույթը մինչև հարկվելը կազմել է 142,514 հազ.դրամ
12. Շահութահարկը կազմել է 12,487 հազ.դրամ

13. Հետաձգված հարկային պարտավորություն - /-1412/ հազ.դրամ
14. Զուտ շահույթը կազմել է 131,439 հազ.դրամ

Բանկի դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ պարզվել է, որ 01.01.2002 թ-ից մինչև 31.12.2002թ

1. Զուտ դրամական հոսքերը մինչև գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունը՝ կազմել է 209283 հազ.դրամ
2. Զուտ դրամական հոսքեր գործառնական ակտիվներից և պարտավորություններից՝ 1581277 հազ.դրամ
3. Դրամական զուտ հոսքերի ներդրումային գործունեությունից՝ / - 475358/ հազ.դրամ
4. Դրամական զուտ հոսքերի ֆինանսական գործունեությունից՝ 0
5. Դրամական միջոցների հոսքերի զուտ աճը կազմել է՝ 1406338 հազ.դրամ

Վերոհիշյալը հիմք ընդունելով՝ հաստատել տարեկան հաշվետվություններն ու հաշվեկշիռը:

**Քվեարկեցին**
կողմ- 100 ձայն
դեմ- 0
ձեռնպահ-0

**ԼՍԵՑԻՆ.**
Գոհար Գրիգորյանին – 2-րդ հարցի կապակցությամբ, առաջարկեց՝ Հաշվի առնելով Վերստուգող հանձնաժողովի եզրակացությանը, և Խորհրդի նախնական հաստատմանն արժանացած տարեկան հաշվետվության Բանկը աշխատել է հազար 131,439 ՀՀ դրամ զուտ շահույթով, ստացված ողջ շահույթը չբաշխել և թողնել Բանկի հեռանկարային զարգացմանը:

**Քվեարկեցին**
կողմ-100 ձայն
դեմ- 0
ձեռնպահ-0

**ԼՍԵՑԻՆ.**
Ռոբերտ Գալստյանին - 3-րդ հարցի՝ Բանկի աուդիտն անցկացնող անձի հաստատման մասին, առաջարկեց՝ Բանկի աուդիտն իրականցնող անձի ընտրությունը կատարել «Գրանտ Թորնթոն ԱՍՒՕ» և CPMG աուդիտորական կազմակերպությունների միջև՝ մրցույթի կարգով:

**Քվեարկեցին**
կողմ-100 ձայն
դեմ- 0
ձեռնպահ-0

**ԼՍԵՑԻՆ.**
Գոհար Գրիգորյանին – 4-րդ հարցի՝ Բանկի մասնաճյուղերի աշխատանքների տարեկան արդյունքների հաստատման մասին: Ներկայացրեց, որ «Վանաձոր» մասնաճյուղի ակտիվները կազմել են 13886 հազ.դրամ, վնասը՝ /- 2593/ հազ.դրամ, «Կենտրոն» մասնաճյուղի ակտիվները կազմել են՝ 27343 հազ.դրամ, վնասը՝ /-3027/ հազ.դրամ, «Գյումրի» մասնաճյուղի ակտիվները կազմել են 10671 հազ.դրամ, վնասը՝ /-2378/ հազ.դրամ:
Առաջարկեց հաստատել մասնաճյուղերի աշխատանքների տարեկան արդյունքները:

**Քվեարկեցին**
կողմ-100 ձայն
դեմ- 0

ձեռնպահ-0

Քվեարկության և ելույթների արդյունքների հիման վրա բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովը

**ՈՐՈՇԵՑ.**

1. Հաստատել տարեկան հաշվետվություններն ու հաշվեկշիռը:
2. ֆինանսական տարվա ընթացքում ստացված **131,439** ՀՀ դրամ զուտ շահույթը չբաշխել:
3. Բանկի աուդիտն իրականացնելու համար հայտարարել մրցույթ «Գրանտ Թորնթոն ԱՄԻՕ» և «KPMG» աուդիտորական կազմակերպությունների միջև, իսկ մրցույթից հետո կնքել պայմանագիր այդ կազմակերպություններից մեկի հետ:
4. Հաստատել ներկայացված Բանկի մասնաճյուղերի աշխատանքների տարեկան արդյունքները:

Նախագահ — Գ. Տ. Զաքարյան

Քարտուղար — Գ.Ա.Աբրահամյան